

Նոր պեղումներ եգիպտոսում Ոչ մի հին կուլտուրական երկիր չի տալիս հնագիտական այնքան առատ անակնկալներ, որքան եգիպտոսը: Չոր կլիման և աւազով ծածկուած անապատները կարողացել են պահպանել հազարաւոր տարիներ աւելի հեշտ փառութեան ենթարկուող նիւթեր, ինչպէս օրինակ փայտ և գործուածքներ: Համարեա ամեն օր եւրոպական և ամերիկական արշաւախմբերը եգիպտոսում պեղումներ կատարելով գտնում են մեծ քանակութեամբ նոր իրեր, որով էլ աւելի պայծառ և կատարեալ բացուած է մեր առաջ հին եգիպտական կուլտուրայի պատկերը:

Գերմանական Արեւելեան Ընկերութիւնը (Deutsche Orient. Gesellschaft) 1907 թւին եգիպտոսի երեք կէտերում յաջող պեղումներ կատարեց: Մի տեղում — Միջին եգիպտոսում Աբուզիր-էլ-Մելէքի մօտակայում Փայումի մօտքի մօտ բացեց անդրպատմական մի գերեզմանատուն, ուր կային մեծ քանակութեամբ գերեզմաններ, որոնք Քրիստոսից 3500 տարի առաջ էին կառուցուած փարաւոնների իշխանութեան տակ ապրող ժողովուրդների նախնիքների ձեռքով: Այնտեղ հանգստանում էին մօլմիաներ կողքի վրա պառկեցրած և ծնօտը ծնկերին յենած: Մարմինը ծածկուած էր խսիրով կամ մորթիով և կաւային հողի մէջ, ուր մեծ դժուարութեամբ կարող էին թափանցել հազադէպ և թեթեւ եգիպտական անձրևները, այս մարմիններից մի քանիսը շատ լաւ էին մնացել, մնալով հողի մէջ մօտ 6000 տարի: Շատ մարմինների վրա պահպանուել էր կնճռոտած կաշին, որի վրա տեղ տեղ երևում էին նոյն իսկ մազեր:

Բոլոր ժամանակների եգիպտացիները հաւատում էին անդրգերեզմանեան կեանքին, և այդ հնարաւոր կլինէր այն ժամանակ, երբ մարմինը լաւ կպահպանուէր, այդ պատճառով էլ ամենահին ժամանակներից նրանք փրնոռում էին իրանց գերեզմանոցի համար պաշտպանուած տեղեր, իսկ աւելի ուշ գտան զմրսելու հնարը և գրանիտեայ դադաղները—սարկոֆագները, պեղումների ժամա-



նակ դր. Մեկերը գտաւ 257 այդպիսի գերեզմաններ, մէկում կար 15 տարեկան երեխայ, որի միայն կմախքն էր մնացել, երեխայի գլխավերում կային մի քանի կաւէ ամաններ, թաղման ժամանակ դրանք լի են եղել կերակրով, որով եգիպտացիների կարծիքով նա կերակրուելու էր անդրգերեզմանեան կեանքում: Պեղումների ժամանակ գտնուել են զարմանալի շինուած կայծաքարից դանակներ և սև քարից շինած գեղեցիկ աման: Ամանների մէջ գտել են ուտելիք այնէ՝ հաց, ալիւր, դարեշուր, իւղ, մսի կտոր, Բայց դրանց հետ միասին գտնուել են նաև զանազան «կեղծուածքներ», որոնք աւելի աժան և երկար կգիմանային: Այսպէս 1906 թւին գերեզմանների մէջ գտնուել են կեղծ հացեր նեղոսի տեղմից և ալիւրի թեփից պատրաստած: Դոկտոր Մեկերը շատ գերեզմաններում գտել է մեծ ամաններ լի մանր սպիտակ աւազով: Դժուար են թաղերի է, որ թաղման ժամանակ այդպիսի խաբեբայութիւն թող տային, այլ հաւանական են թաղութիւն է, որ նոքա հաւատում էին Օղիւրիսի զօրութեան, որը կարող էր այդ աւազը իսկական ալիւրի փոխարկել:

Եգիպտացիների մեռելների պաշտամունքն աւելի հետաքրքիր է դառնում մեզ համար շնորհիւ մի այլ պեղումի, որ տեղի է ունեցել Կայիրէից հարաւարեւելք: Աբու-զիր գիւղի մօտերքում գտել են «մեռելների տաճարը» «հին թագաւորութեան» ժամանակներից, Քրիստոսից 2500 տարի առաջ շինուած: Քարերով շրջապատուած փակ մուտքը տանում է գէպի մեռելների տաճարը, որի մէջտեղում բարձրանում է կոթող նուիրուած Արևի աստծուն: Շէին: Մեռելներին նուիրուած օրերին քուրմերը այս մուտքով հանդիսաւորապէս գնում էին Տաճար: Այս տաճարներից մինում գտնուեցան մի քանի չքեղ ամաններ, որոնք պարզեցին մինչև այժմ անլուծանելի հանելուկը: Նախկին պեղումների ժամանակ այդ տեղում գտնուել էին յաղճապակեայ կապոյտ և երկնագոյն կտորներ, որոնց նշանակութիւնը մարդաբանների համար միանգամայն անհասկանալի էր մնացել: Այժմ երևաց, որ դրանք զարդա-



բանքներ են մեծ փայտեայ վազերի, որոնք մեռած թագաւորների պաշտամունքի մէջ որեւէ դեր են կատարել: Յաջողել է զանազան մեծութեան և ձևի փայտեայ վազերի մնացորդներ հանել: Այս բարձր վազերը, որ յիշեցնում են իրանց ձևով եգիպտական յայտնի կրօնական անօթները, պէտք է որ նմանողութիւն լինէին քարերով զարդարուած ոսկեայ թանկագին վազերի: Նրանք չինուած էին ոսկեզօծ փայտի կմախքից և ճենապտիկի կտորները զանազան ձևերով վրան կապուած:

Թագաւորներից մինի մեռելների տաճարը տանող Նեղոսի ափից դռների մօտ Գերմանական Արևելեան բնկերութիւնը գտել է աւելի հետաքրքիր գանձ, այս դռները կանգնած են գետափին չրջատուած ոչ բարձր ցանկով, գետափը բարձրանում է անմիջապէս դետից, մեծ սենեակի յետևում, տեղաւորուած է սինազարդ դահլիճը, որ T ձևն ունի. սրան միացած է մեռելների տաճարը տանող մուտքը: Այս դահլիճի պատերը զարդարուած են եղել կրից դուրս ցցուած հրաշալի քանդակներով, գլտնուած մի մեծ կտոր քանդակ ներկայացնում է թագաւորին, նա օտարերկրացիներին նուաճող Սապտու աստծու նման գնում է իր թշնամիների դիակների վրայով թեաւոր առիւծի (գրիֆ) պատկերով, նա տրորում է ասիացիներին, լիբիացիներին և Պունտայի բնակիչներին և այս բոլոր ազգերը իրարից տարբերում են իրանց հագուստներով, միւս րելեֆի վրա նկարած են չարք չաստուածներ, սրանցից իւրաքանչիւրը երկար թսկից կտպած քաշում է երկու ստրուկ և ցոյց է տալիս թագաւորին: Մի ուրիշ րելեֆ ներկայացնում է նեկրեա չաստուածուհուն, որ ստինքով կերակրում է թագաւորին: Սոքա մինչև այժմ գլտնուած եգիպտական գեղարուեստների մէջ ամենալուերն են:

Հնագիտական զարմանալի հարստութիւն են գտնուել ուսուցչապետ Բօրհարդի միջոցով յայտնի Տէլլէլ-Ամարնի պեղումների մէջ: Այստեղ մօտ 1400 տարի առաջ ն. թ. Ք. ապրում էր նշանաւոր «հերետիկոս թագաւոր» Ամենխոտեպ IV, ուս երևակայող և փիլիսոփայօրէն տրա-



մադրուած թագաւոր էր, որը կամենում էր իր ժողովրդին տալ նոր կրօն։ Առ հասարակ նա հին ժամանակների աւելի հետաքրքիր գէմքերից մինն է։ Նրա գաղափարով բոլոր հին աստուածները պիտի տեղի տային Արևին, որին երկըրպագելը պիտ յայտնի լինէր բոլոր ազգերին, որոնք ապրում էին իր ընդարձակ թագաւորութեան մէջ, որ տարածւում էր Եփրատից մինչև Սուգանի սահմանները։ Ի հարկէ պետութեան գերագոյն աստծու Ամօնի քուրմերը ապստամբեցին նրա դէմ։ Մեծ զայրոյթով նա թողեց իր նախորդների մայրաքաղաք Թեբան և այժմեան Տել-էլ-Ամարն-ի վրա հիմնեց նոր մայրաքաղաք Եգիպտոսի համարեա կենդրոնում և անուանեց «Արևի հորիզոն»։ Այստեղ երիտասարդ թագաւորը ապրեց իր կնոջ, աղջիկների թիկնապահների և «նոր վարդապետութեան» կողմնակիցների հետ։ Այստեղ նա շարադրեց տրին նուիրուած սիրուն ներքողը, որը կեանք է տալիս մարդկանց, կենդանիներին, ջրի մէջ ձկներին, օտարերկրացիներին և եգիպտացիներին։ Այստեղ, հեռու աղմկալից աշխարհից, նա ամբողջապէս նուիրուեց փիլիսոփայական և աստուածաբանական մտածութեանց։ Եգիպտոսում մինչ այդ աւանդութիւն համարուած կարգերի հակառակ, գեղարուեստն էլ նոր ուղի գտաւ, որ մինչ այդ հին կրօնի ներկայացուցիչների կողմից արհամարհւում էր։ Իր քաղաքը հիմնելու ժամանակ Ամենխոտեպ IV օգտուեց ժամանակակից գեղարուեստագէտների ծառայութիւնից, որոնք դուրս էին եկել ժողովրդի միջից և իրանց ստեղծագործութիւնների մէջ ազատ էին քրմերի աւանդականութիւնից։

Այս ահագին փլատակների վրա, որ մի քանի տեղ լայնութեամբ 23 քիլոմետր (մօտ 23 վերստ) է հասնում և մասամբ միայն պեղած է, հնագէտները կրկին ուշադրութիւն դարձրին, երբ եգիպտական հնահաւաքների մօտ տեսան մի քանի շատ սիրուն արձաններ, որ վերաբերում էին Ամենխոտեպ IV-ի շրջանին. այս արձանները երևի գաղտնաբար հանուած էին այդ նշանաւոր փլատակների տակից։



Տէլլ-էլ-Ամարն միւս աւերակներից նրանով է զանազանում, որ այն միայն մի անգամ են վերաշինել, «Հերետիկոս թագաւորի» վաղահաս մահից յետոյ, նրա բոլոր նորութիւնները իսկոյն խորտակեցին: Թերայի քուրմերը կատարեալ յաղթանակ տարան: Նրանք աշխատում էին, որ իրանց ատելի արևի քաղաքը աւերուէր և բնակիչները ցրուէին: Տէլլ-էլ-Ամարնի բնակիչը «պիղծ նզովեալ էր», և եգիպտացիները երբէք այլևս չբնակուեցին այն տեղում, ուր ապարանքն էր: Դեռ այժմ էլ այնտեղ ամեն ինչ կանգնած է այնպէս, ինչպէս 3000 տարի առաջ, միայն անապատի աւազը իր քողով ծածկել է աւերակները:

Այստեղ Բօրհարդը փորձեց վերականգնել նշանաւոր արքայազուններին պատկանած երկու տուն. երկու տների դիրքը միատեսակ է. պատշգամբից և նախասենեակից դուր մտնում էք երկու մեծ դահլիճներ, որոնք միացած են դռնով. դա «լայն դահլիճն է» և «խոր դահլիճը»: Առաջինը համապատասխանում է մեր ընդունարանին. նա լուսաւորում է մեծ լուսամուտով, որ նայում է դէպի հիւսիս: Պատերի մօտ շինուած են փոքրիկ բարձրութիւններ, որոնց վրա երևի դրւում էին տանախրոջ և հիւրերի համար նշատարաններ, տան պատերի վրանկարուած են եղել լստոսի, տերեփուկի և խալխալի ծաղիկներից հիւսած շղթաներ, որոնց մէջ կախուած են եղել էրէներ: «Խոր դահլիճը», որ համապատասխանում է մեր սեղանատանը, նկարուած է եղել նոյն ոճով, միայն ներկերը այլ գոյնի. այնտեղ էլ եղել է նստելու համար բարձրութիւններ: Յատակի վրայ շինած անօթը ամառը լցնում էին ջրով սենեակը զովացնելու համար: Եգիպտացիները ձմերային ցրտից պաշտպանուելու համար օգտուում էին շարժական «վառարաններով»: Դա մի մեծ թրձած կաւից աման էր—մանղալ, որի մէջ դեռ մինչև այժմ էլ պահուում է մօխրի մնացորդը: Եւ դա մեր նաւթի շարժական վառարանի նախնական օրինակն է: «Յածրիկ դահլիճի» յետևում գտնւում է ննջարանը, որ հեշտ է իմանալ մահճակալի համար շինուած նիշից ննջարանին կից շինուած է լողարանը: Սա փոք-

րիկ սենեակ է կրաշերտերով սալած. յատակի վրա շինուած է ջրտար, որի միջով գործածուած ջուրը առանձին խողովակով թափուել է տան յետևում՝ շինուած հորի մէջ։ Լողարանի կողքին գտնուած մանր սենեակները երեւի հանդերձները հանել-հագնելու համար են շինուած։ Լողանալը երեւի կայանում էր նրանում, որ մեծ կաւէ ամաններով մարդ իւր վրա ջուր էր ածում։ Այս խիստ առողջապահական յարմարութիւնը գործադրուած էր 14 դար առաջ ի. ք. Ք. Մի քանի կողմնակի շէնքեր, մասաններ և գոմեր լրացնում էին արքայազնի տնտեսութիւնը։

Բօրհարդը ենթադրում է, որ այստեղ պիտի լինի հարուստ զարգարուած արեւի տաճարը Ամենխօտեպ IV-ի շինած, և անգլիացիների գտած «պալատը» միայն այդ տաճարի մի մասն է։ Բացի այդ, հնագէտներին յաջողել է գտնել իսկական պալատի տեղադրութիւնը, ուր ապրելիս է եղել «Հերետիկոս թագաւորը»։ Նրա մարդու բարձրութեամբ պատերը դեռ կանգուն են և երեւի կ'աջողի վերականգնել շէնքի ընդհանուր յատակագիծը։ Բազմաթիւ գիւտերի մէջ առանձին հետաքրքրութիւն է զարթեցնում ինչ որ արձանի կտոր։ Բօրհարդտի կարծիքով դա նետահար առիւծի յետին ոտի թաթը պիտի լինի։ Մինչև այժմ միայն բելեֆնների վրա երևում էր նկարուած թագաւորը առիւծ որսալիս, այժմ դուրս է գալիս, որ գոյութիւն են ունեցել նրա մեծ արձանները։

Դր. Գ. Բանկէ.

